ԲԱՆԱՍԱՑՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ ՅՈԼՉԻԻ

Ծնվել է 1912 թվականին Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղում, ապրում է Իջևանի շրջանի Աճարկուտ գյուղում: Ունի տարրական կրթություն: 1937 թվականից աշխատում է անտառտնտեսությունում՝ որպես անտառապահ: 1972 թվականին, ձայնագրությունը կատարելու ժամանակ, նա աշխատում էր որպես Աճարկուտի հնագիտական հուշարձանների պահակ: Գիտեր բազմաթիվ զրույցներ, հեքիաթներ, զվարճախոսություններ, ավանդություններ և հուշապատումներ: Բանասաց Սարիբեկ Ալավերդյանից նյութեր ձայնագրվել են 1972 և 1975 թվականներին:

ԱՅՎԱԶՅԱՆ ԲԵՂԼԱՐ ՍԱՐԳՍԻ

Ծնվել է 1892 թվականին Ղազախի գավառի Ղարանլուխդարա (այժմ՝ Լուսաձոր) գյուղում: Կիսագրագետ է, զբաղվել է հողագործությամբ, աշխատել է կոլտնտեսությունում: Բանասացը գիտեր բազմաթիվ հեքիաթներ, սակայն հիվանդության պատճառով պատմեց միայն մի քանիսը, որոնց մի մասն ընդգրկված է Ժողովածուում:

ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ԱԼԲԵԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Ծնվել է 1893 թվականին Ղազախի գավառի Ուզունքալա գյուղում (այժմ՝ Տավուշի մարզի Այգեհովիտ գյուղ): Կիսագրագետ է: Բանասացը ողջ կյանքն անց է կացրել իր ծննդավայրում, զբաղվել է հողագործությամբ, այգեգործությամբ և գինեգործությամբ: Ալբեկ քեռին գյուղական կենցաղի ու ժողովրդական բառ ու բանի լավագույն գիտակ էր, գիտեր բազմաթիվ հեքիաթներ, զրույցներ, զվարճապատումներ: Ալբեկ Առուստամյանը նաև ստեղծագործելու շնորհք ուներ և տարբեր առիթներով ստեղծել է գյուղի կյանքն ու այգեգործի հոգսերն արտացոլող չափածո ստեղծագործություններ, երգեր, որոնք գյուղացիները գյուղամիջում և տարբեր հավաքների ժամանակ լսում են մեծ բավականությամբ: Մեր գրառումների ժամանակ բանասացը «Ստվետի այգու» պահակն էր և ստեղծել էր երգերի մի շարք, որի մասին ասաց. «Բաղը քցել են, մի հեկտար բաղ ա ըտեղ, լըս էլ պահակ եմ, վերչը ըտեղ խաղողը տանըմ են էլի: Տրա վրա մի երգ եմ ասել»: Նրա՝ հանպատրաստից ստեղծագործելու ունակությունը շատ էր դուր գալիս գյուղի երիտասարդներին և յուրաքանչյուր պատեհ առիթ նրանք օգտագործում էին ու համոզում Ալբեկ քեռուն որևէ բան ասել: 30-ական թվականներին, գյուղամիջում հավաքված մի խումբ երիտասարդներ Ալբեկ քեռուն ցույց են տալիս «Закфедерация» ծխախոտի տուփը, որի վրա պատկերված էր երեք գյուղացի, ու խնդրում են այդ տուփի մասին հանպատրաստից որևէ բան ասել, և բանասացն ասում է իր նշանավոր «Չակավկազկի ֆեդերացի» սրամիտ չափածոն:

Ալբեկ Առուստամյանից բանահյուսական նյութերը գրառվել են 1970-72 թթ. նախ՝ ձեռքով, ապա՝ ձայնագրիչով:

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՍԵՐԳՈՅԻ

Ծնվել է 1909 թվականին Իջևանի շրջանի Ռնազլու (այժմ՝ Դիտավան) գյուղում: Գյուղի դպրոցում սովորել է մինչև 4-րդ դասարանը, աշակերտել է ուսուցիչ Գուրգեն Խեմչյանին, որի մասին ասաց, որ նա ներկա ուսուցիչների նման չի եղել և ամեն ինչ սովորեցրել է: Աշխատել է կոլտնտեսությունում, եղել է ֆերմայի վարիչ, գյուղխորհրդի նախագահ, մեղվաբույծ, այգեգործ: Զրուցասեր մարդ է, գիտի բազմաթիվ պատմություններ: Թոռան այն

հարցին, թե. «Պապի, որտեղի՞ց գիտես այդքան բան», նա ասաց. «Մի մարդ, որ բանտում նստած լինի, նրան էլ կասեն՝ որտեղի՞ց»: Նյութերը գրանցել եմ աստիճանաբար՝ 10 օրվա ընթացքում: Երբ նա որևէ բան էր հիշում, ինձ կանչում էր, որ գնամ գրի առնեմ:

ՁԻԼԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՔ ՄԿՐՏՉԻ

Ծնվել է 1912 թվականին Իջևանի շրջանի Թալա (այժմ՝ Գետահովիտ) գյուղում: Կիսագրագետ է, աշխատում էր կոլտնտեսությունում (զբաղվում է հողագործությամբ): 1932-35 թթ. աշխատել է որպես նախրապան: 1941-45 թթ. մասնակցել է Հայրենական պատերազմին, վերադարձից հետո մինչև 1967 թվականը աշխատել է որպես հովիվ: Նա գիտի բազմաթիվ հեքիաթներ ու զրույցներ, իր ասելով գիտի մոտ 60 հեքիաթ: Հեքիաթների մի զգալի մասը նա սովորել է 1915 թ. Վանից գաղթած Խաչո բիձայից: Նրանից ձայնագրվել է մի սիրավեպ («Շահ Իսմայիլ») և հինգ հեքիաթ, որոնցից «Ձոմշուղն ու Մոմշուղը» հեքիաթը սովորել է իր եղբոր աներոջից՝ վանեցի Խաչո բիձայից: Բոլոր հեքիաթներն ընդգրկված են ժողովածուում:

ԹՈՒԽԱՐՅԱՆ ՎԱՐԴԵՎԱՆ ԿԱՐԱՊԵՏԻ

Ծնվել է 1914 թվականին Իջևանի շրջանի Սևքար գյուղում: Ծնողները նույնպես սևքարեցիներ են եղել: Մայրը եղել է Սարիբեկյանների տոհմից: Բանասացն իր մորը բնութագրեց այսպես. «Ուժեղ կին էր, շատ ուժեղ կին էր՝ տղամարդի պես»: Մինչև չորրորդ դասարանը սովորել է Սևքարում, երեք տարի էլ սովորել է Իջևանի դպրոցում: Այնուհետև գնացել է Թբիլիսի, փականագործի արհեստ է սովորել և աշխատել «Արսենալ» զինագործարանում: Երկար տարիներ ապրել է Թբիլիսիում, բայց կապը Սևքարի հետ չի կտրել, թոշակի անցնելուց հետո կնոջ հետ տեղափոխվել է գյուղ:

Բանասացն իր պատմած հեքիաթների մի մասը լսել է Շամշուլդա գյուղում՝ իր կնոջ հարազատներից: Նյութերը գրանցվել են 1988 թվականին, ձայնագրությունները պահպանված են:

ԽԵՄՉՅԱՆ ՀԱՅԿ ԱՐՏԱՇԵՍԻ

Ծնվել է 1907 թվականին Ղազախի գավառի Ռևազլու (այժմ՝ Դիտավան) գյուղում: Ի դեպ, գյուղի հին անվանումը փոխելու ժամանակ նա առաջարկել է Դիտավան անվանումը, որովհետև գյուղը բարձր դիրք ունի և այնտեղից երևում են Աղստևի հովիտն ու հարևան գյուղերը, իսկ Ճաշաքար կամ Համզաքար կոչվող բարձունքից երևում է նաև Թբիլիսի քաղաքը՝ իր շրջակայքով: Գյուղի նախկին անվան մասին գյուղացիները պատմում էին, որ եղել է Ռևազ անունով մի քյոխվա, որի անունով էլ կոչվել է գյուղը: Սակայն բանասաց Հայկ Խեմչյանը, որը հայոց լեզվի և գրականության մասնագետ էր, Իջևանի խոսվածքի բարբառային առանձնահատկություններից ելնելով, Ռևազլու անվանումն ստուգաբանում էր հետևյալ կերպ: Դիտավան գյուղի դիրքն այնպիսին է, որ առավոտյան արևը գյուղի վրա ընկնում էր կեսօրին (օրը ճա̈շ ա տա̈ռնըմ նոր), որովհետև գյուղից վերև գտնվող Ճաշաքարը ստվերում է գյուղը, հենց այդ պատճառով էլ լեռնագագաթը կոչվում է Ճաշաքար, այսինքն՝ ճաշին՝ կեսօրին է արևն ընկնում, իսկ մինչև կեսօր լեռան ստորոտում և անտառի փեշին գտնվող գյուղն արևազուրկ է: Բանասացը ենթադրում է, որ գյուղը նախապես կոչվել է Արևազուրկ, որի բարբառային տարբերակն է՝ Ըրևազուրկ, որից էլ Ըրևազ-Րևազ-Ռևազ գյուղ:

Հայկ Խեմչյանի պապը՝ քահանա Արիստակես Տեր-Խեմչյանցն ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, հիմնադրել է Դիլիջանի, ապա նաև Իջևանի ծխական դպրոցները և ուսուցչություն է արել, ապա ձեռնադրվել է քահանա և 1887 թվականին հիմնավորվել Իջևանի Ռևազլու գյուղում: Նա հոգ է տարել, որ իր զավակներն ու թոռները հիմնավոր կրթություն ստանան և ունենան բազմակողմանի զարգացում: Նա հայ գրական լեզվի տարածման և ամրապնդման ջատագովներից է եղել և հետևել է, որ իր ընտանիքում էլ օգտագործ-

վի գրական հայերենը: Չնայած պապի խիստ պահանջներին՝ նրա զավակներն ու թոռները տիրապետել են նաև բարբառին: Բանասաց Հայկ Խեմչյանը գերազանց գիտեր իր մայրենի բարբառը և անհրաժեշտության դեպքում օգտագործում էր այն, իսկ ժողովրդական զրույցների նրա պատումներն անգուգական են: Ինչպես Հայաստանի այլ բնակավայրերում, այնպես էլ Ռնազլուում, տեղացիները պատմում են տարբեր զվարճալի միջադեպեր՝ կապված համագյուղացիների հետ: Հայկ Խեմչյանը ոչ միայն հրաշալի գիտեր գյուղի հիմնադրման, գյուղական ազգատոհմերի պատմությունները, այլև առանձին ազգատոհմերի նախնիների հետ կապված զվարճալի միջադեպերն ու զրույցները, որոնք պատմում էր անթերի բարբառով՝ պահպանելով գյուղական կոլորիտի բոլոր նրբերանգները: Նրա պատմած զրույցները մի-մի փոքրիկ նովելներ են՝ անսպասելի դրամատիկ ավարտով: Այդ զրույցներում վիշտն ու ծիծաղը խառնված են իրար: Զրույցների հերոսները իրական խեղճ ու միամիտ մարդիկ են՝ կքած իրենց բազում հոգսերի տակ: Բանասացն իր պատումներում օգտագործում է բարբառային այնպիսի բառեր ու արտահայտություններ, որոնք այժմ գործածությունից դուրս են եկել: Ի դեպ, բանասացը հրաշալի տիրապետում էր մի շարք բարբառների և սիրում էր ու վարպետորեն վերարտադրում էր տարբեր բարբառներով իր իմացած բանահյուսական նյութերը:

Հայկ Խեմչյանն ստացել է մանկավարժական բարձրագույն կրթություն և իր կյանքի 60 տարիները նվիրել է մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը, որի համար 1969 թվականին արժանացել է ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի կոչման:

Մասնագիտության բերումով աշխատել է Իջևանի շրջանի գրեթե բոլոր գյուղերում, ինչպես նաև Շամշադին շրջանում, Գանձակում և Ստեփանակերտում, որի ընթացքում շփվել է ժողովրդական լայն զանգվածների հետ և իր հիշողության մեջ ամբարել ու իր խոսքում կիրառել ժողովրդական անհատնում գանձարանի շռայլ բառ ու բանը:

ԽԵՄՉՅԱՆ ՔՆԱՐԻԿ ԱՐՏԱՇԵՍԻ

Ծնվել է Իջևանի շրջանի Դիտավան (նախկին Ռնազլու) գյուղում, գյուղական քահանայի և ուսուցչի ընտանիքում: Ունի բարձրագույն կրթություն, մասնագիտությամբ բժիշկ է: Խեմչյանների ընտանիքի ավանդույթի համաձայն՝ սիրում է իր առօրյա խոսակցության մեջ օգտագործել ժողովրդական առած-ասացվածքներ, դարձվածներ, պատկերավոր արտահայտություններ, համեմատություններ: Խոսակցության բնույթին համապատասխան՝ պատմում էր որևէ զրույց, ավանդություն կամ անեկդոտ, որոնց մեծ մասը լսել է մանկության տարիներին հորից, պապից և համագյուղացիներից: Գիտեր բազմաթիվ զրույցներ, անեկդոտներ, հանելուկներ, առած-ասացվածքներ, դարձվածներ և այլն: Լավ գիտի հայկական ժողովրդական խոհանոցը, ժողովրդական կենցաղը, գյուղացիների տոհմերի պատմությունը: Մեծ սեր և հակում ուներ ժողովրդագիտության նկատմամբ և սիրում էր ամեն ինչ խորքով ուսումնասիրել: Խոսքաշատ, զրուցասեր և յուրատիպ անձնավորություն էր, սիրում էր կրկնել. «Գրի առ, թե չէ կմեռնեմ, ուրիշ պատմող չի լինի»:

ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ՀՈՎՍԵՓԻ

Ծնվել է 1905 թվականին Ղազախի գավառի Խաչթառակ գյուղում: Ողջ կյանքն ապրել է Խաչթառակում, գրագետ է: երկար տարիներ աշխատել է Իջևանի ֆինբաժնում: Նյութերը գրառելու ժամանակ արդեն թոշակառու էր: Խաչթառակի գյուղամիջյան հավաքատեղիի ակտիվ զրուցաբաններից էր: Բանասաց Արամայիս Հակոբջանյանը գիտեր բազմաթիվ հեքիաթներ, զրույցներ, ավանդություններ և հուշապատումներ: Նրա պատմած հեքիաթների մի մասը և հուշապատումները քաջալ Գարեգինի մասին ընդգրկված են ժողովածուում; Նյութերը ձայնագրվել են 1975 թ. ամռանը:

ՀԱՄԶՅԱՆ ԹԱԳՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ծնվել է 1910 թվականին Ղազախի գավառի Ուզունթալա (այժմ՝ Այգեհովիտ) գյուղում: Ողջ կյանքն ապրել է Այգեհովիտում: Բանասացը կիսագրագետ է, իր գրագիտության մասին նա ասաց. «Լավըսալ սվորել եմ, էնքան, որ կարամ ըրեխանցը դասը սվորցնեմ»:

Աշխատել է կոլտնտեսությունում, տասնհինգ տարի եղել է հացի փռի վարիչ: Բանասացը խոսքաշատ կին էր, գիտեր հեքիաթներ, զրույցներ, զվարճախոսություններ, հանելուկներ, երգեր, շատ լավ երգում էր: Ձայնագրությունը կատարվել է հիվանդանոցում, բանասացը թեև նեղվում էր, բայց հերոսաբար դիմացավ լարվածությանը: Բանասացը նաև ստեղծագործելու հակումներ ուներ: «Եկ, եկ, եկ, սիրուն յար ջան» երգը հորինել է բանասաց Թագուհի Համզյանը:

Բանասաց Թագուհի Համզյանից նյութեր գրառվել են 1972 թ. (ձայնագրիչով) և 1973 թ.՝ (ձեռքով):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Ծնվել է 1898 թվականին Վան քաղաքում: 15 տարեկան հասակում, կոտորածից մազապուրծ, հոր հետ գաղթել է Արևելյան Հայաստան և հաստատվել Ղազախի գավառի Թալա (այժմ՝ Գետահովիտ) գյուղում:

Թալայում նա մի քանի տարի դպրոց է գնացել և գրագիտություն սովորել: Մինչև Հայրենական պատերազմի սկսվելը նա մի յոթ ամիս աշխատել է Բաքվում, ապա զորակոչվել է բանակ: Պատերազմի ավարտից հետո վերադարձել և մնացած կյանքն անց է կացրել Թալա գյուղում: Աշխատել է կոլտնտեսությունում: Բանասաց Հարություն Հարությունյանը վանեցի նշանավոր հեքիաթասաց Խաչո բիձայի որդին է: Նա հորից սովորել է բազմաթիվ հեքիաթներ: Խաչո բիձան եղել է նաև բանասաց Ավետիք Ջիլաբյանի վարպետը:

Հարություն Հարությունյանի պատմած նյութերը գրառվել են ձեռքով 1973 թ. և ընդգրկվել են ժողովածուում: Ցավոք, նրան ձայնագրելու հնարավորություն չի եղել:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՇԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

Ծնվել է 1885 թվականին Բիթլիսի նահանգի Խիզանի գավառի Խարխոց գյուղում: 1915 թ. ցեղասպանության ժամանակ և գաղթի ճանապարհներին նա կորցրել է իր բոլոր հարազատներին, առաջին կնոջն ու երեք երեխաներին: Իր թափառումների ընթացքում 1923 թ. Դիլիջանում Նշան Հովհաննիսյանը հանդիպում է վանեցի մի կնոջ, որը նույնպես կորցրել էր իր ողջ ընտանիքը և ամուսնանում է նրա հետ: Ի վերջո Նշան Հովհաննիսյանը հաստատվում է Իջևանի շրջանի Սևքար գյուղում: Նշան Հովհաննիսյանն անգրագետ է, զբաղվել է գյուղատնտեսությամբ, աշխատել է կոլտնտեսությունում:

Բանասացը գիտեր և պատմում էր բազմաթիվ հեքիաթներ, զրույցներ, հուշապատումներ, երգեր, որոնք լսել և սովորել էր իր բնօրրանում: Նա նաև տիրապետում էր քրդերեն լեզվին և պատմում էր քրդական հեքիաթներ: Հայերենով գրառվել է «Մամո և Զինե» սիրավեպը: Նշան Հովհաննիսյանից նյութերը գրառվել են 1970-72 թթ. և՛ ձեռքով, և՛ ձայնագրիչով:

ՄԱՅԻԼՅԱՆ ՍՈՒԼԹԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ

Ծնվել է 1906 թվականին Ղազախի գավառի Ձողազ (այժմ Բերքաբեր) գյուղում: 14 տարեկանում ամուսնացել է ջողազեցու հետ և ողջ կյանքն ապրել Ջողազում, ունեցել է երեք տղա, երկու աղջիկ: Գրագիտության մասին հարցին նա այսպես պատասխանեց. «Յոթը տարի սվորել եմ: Հա՛, կարթըմ եմ, ըրեխանց տա՜սեր-մա՜սերը մի աչկանի սվորցնըմ եմ (բանասացը նկատի ունի թոռնիկներին), իմ մերը գրագետ կնիկ էր՝ Թիֆլիզ ա սվորել: Ինձ էլ որ դպրոց տվուց, կեղացիք ծըծաղին, ասին. «Ախճիկն ի՞նչ, դպրոցն ի՞նչ, ամոթ չե՞ս քաշըմ»: Ասել ա. «Դե կոնյա, հլե , որ շատը քյնա՜ ոչ, քիչն էլ ա կքյնա՜»:

Բանասացի պատմածից հետևում է, որ նրա մայրը շատ բան է սովորեցրել իր զավակներին: Բանասաց Սուլթան Մայիլյանն աշխատել է կոլտնտեսությունում՝ որպես ծխախոտագործուհի:

Նա գյուղական կյանքի ու կենցաղի գիտակ էր, հրաշալի գիտեր ազգային խոհանոցը, ժողովրդական բժշկություն, անձրևառաջացման, անձրևախափան և կարկտախափան ծեսերը, ինչպես նաև հեքիաթներ, հանելուկներ, խաղիկներ, օրհնանքներ և այլ նյութեր: Նա շատ զրուցասեր կին էր, բացի բանահյուսական նյութերից, նա պատմեց նաև մի շատ հետաքրքիր հուշապատում: Բանասաց Սուլթան Մայիլյանին ձայնագրել եմ 1985 թ. ամռանը՝ Բերքաբեր գյուղում, ձայնագրությունը պահպանված է:

ՇԱՀԻՆՅԱՆ ԵԳՈՐ ԱՎԵՏԻՔԻ

Ծնվել է 1904 թվականին Ղազախի գավառի Կունեն գյուղում, որը խորհրդային տարիներին վերանվանվել է Գետաշեն, իսկ այժմ կոչվում է Կիրանց: Բանասացը կիսագրագետ է: Նա գիտեր ավանդություններ ու պատմություններ, հատկապես գյուղի շրջակայքում գտնվող Կիրանց և Առաքելոց վանքերի ու Ագռավի մատուռի մասին, ինչպես նաև հեքիաթներ, զրույցներ, զվարճախոսություններ: Նյութերը ձայնագրվել են 1975 թ. ամռանը Կիրանց գյուղում:

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ ՍՈԼՈՄՈՆԻ

Ծնվել է 1893 թվականին Ղազախի գավառի Սըռի գյուղում (այժմ՝ Սարիգյուղ): Ողջ կյանքն անց է կացրել իր ծննդավայրում, զբաղվել է հողագործությամբ: Մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմին, 1914-ից մինչև 1920 թվականը եղել է ռուսական բանակում, մասնակցել ռազմական գործողություններին և ինչպես ինքն ասաց. «Ռուսաստան էլ, մի իրեք պետության հող էլ ման եմ եկել»

Բանասացն անգրագետ է. «Մեր ժամանակը դպրոց չի ըլել, ախճիկ ջան, մեր ժամանակը դպրոց չի ըլել»: Բանասաց Մեսրոպ Շահնազարյանը գիտեր բազմաթիվ հեքիաթներ, զրույցներ, առակներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, օրհնանքներ, բարեմաղթություններ և այլն: Նա մեծ ոգևորությամբ էր պատմում իր իմացածը և այն հարցին, թե որտեղից գիտի այդ պատմությունները, նա ասաց. «էտքան պա՛ներն էլ մենձ մարթկերանց, էն հարուր տարեկան, հարուր քսան տարեկան մարթիք զրից են արել, միտս ա ընգել էնօրվանից սօր: ... Կյա՛մերըմը մեծ մարթիք են ըլել, ճըմբուռն[1] արած՝ դաքերուն նստած, թորնի հացը՝ տուկլուղի՝ դաքերնուն, մենք էլ մա՛ցել ենք, ըրեխեք ենք, շկոլ չենք ունեցել, մեր տնական տըվարի, մեր ոչխարի եդնա պտիտ ենք եկել, մտերնուս կենըմ ա, բալիկ ջան»:

Բանասաց Մեսրոպ Շահնազարյանին անչափ դուր եկավ այն, որ իր պատմությունները, հեքիաթներն ու զրույցները հետաքրքրում են մարդկանց և պիտանի են: Այդ առիթով նա ասաց. «... Մեր հին պա՛ները կա էլի՝ տեսակ-տեսակ: Դե հմի թե հիմք կընթունեն, հիմք չեն ընթունի, մեր պարտքն էտ ա, որ մենք ասենք: էտ թավ՛ւր պա՛ների միհար ե՞ս նեղություն քաշել, բալիկ ջան, սօր էլ կացի, էքուց էլ կացի, տունը՝ տաք, տեղը՝ լա՛վը, ասեմ, տա՛ւն էլ տպի տար»:

Բանասաց Մեսրոպ Շահնազարյանը բացի բանահյուսական նյութեր պատմելուց հաճույքով դատողություններ էր անում ու խորհրդածում կյանքի, մարդկության, հավերժականի ու անցողիկի, մարդկային լավ ու վատ բնավորությունների մասին, համեմատում էր նոր կյանքը հնի հետ, ներկա ժամանակների կանանց, հին ժամանակների կանանց հետ («...Հիմիկվան կնանիքն ել են կնանի՞ք, հեչ պա՛ն են, կապեկ չեն: Մանիլը գիդեն ո՛չ, կյա՛րծիլը գիդեն ո՛չ, հյա՛ւսիլը ... »): Իր խորհրդածություններով Մ. Շահնազարյանը հանգում է այն եզրակացության, որ ամենակարևորը հողն է. «Աշխարիս մեչ թանկարժեք, ազիզ պա՛ն ի՞նչն ա՝ հողն ա: Հողից ազիզ պա՛ն երգ-

---

[1] ճըմբուռ, ճըմուռ - թարմ տաք հացը յուղի և շաքարավազի հետ խառնած ուտում էին (ծանոթ. բանահավաքի):

րըմ չկա։ ... Հողիցն անուշ պանն, իսանիցն էլ դոչաղ ոչ մի պանն չկա։ Էտ էրկու պանը։ Իսանաթը հասիլ էկել ա հողը պարարտացնելու համար։ Իմ պապերը բեջարել են, միէ՝ ես, ինձանից էլ՝ իմ ժառանգությունը, պորտեց պորտ, հողը խարաբ մնալ չի, հողը կմնա՞...»։

Բանահյուսական նյութերը Մեսրոպ Շահազարյանից ձայնագրվել են 1972 թ. մարտին և 1974 թ. ամռանը։ Նյութերի զգալի մասն ընդգրկված է ժողովածուում։

ՍԻՄՈՆՅԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ ՄՈՒՇԵՂԻ

Ծնվել է 1914 թվականին Ղազախի գավառի Քարվանսարա (այժմ՝ Իջևան) գյուղում, գինեվաճառ Մուշեղ Սիմոնյանի ընտանիքում։ Սիմոնյանները, կամ ինչպես իջևանցիներն են ասում, Տերտերանք (նաև Մաթոսանք) Քարվանսարայի առաջին հիմնադիր ընտանիքներից մեկն են։ Բանասացի հորեղբայրներից մեկը՝ Տեր Կոմիտաս քահանա Սիմոնյանը գրել է Քարվանսարայի հիմնադրման պատմությունը (ձեռագիրը պահպանվում է Մատենադարանում), իսկ Մարտիրոս Սիմոնյանը Ներսիսյան դպրոցում մաթեմատիկա էր դասավանդում, թղթակցում էր թիֆլիսահայ մամուլին, հատկապես «Մշակ» թերթում տպագրվել են նրա հոդվածները՝ իր ծննդավայրի պատմության և ընթացիկ կյանքի մասին։ Մարտիրոս Սիմոնյանը նաև որպես բնորդ է ծառայել Վարդան Մամիկոնյանի դիմանկարի համար։

Բանասացը մեծացել է բազմանդամ և ավանդապահ ընտանիքում։ Նա նախ սովորել է Թիֆլիսում, ապա հոր մահից հետո վերադարձել է Իջևան և այնտեղ ավարտել միջնակարգ դպրոցը։ Դպրոցն ավարտելուց հետո նրան անմիջապես ուղարկում են Թալա գյուղ՝ որպես ուսուցչուհի։ Հետագայում նա ստացել է մանկավարժական կրթություն և ողջ կյանքը նվիրել դպրոցին։ Նա մինչև 60-ական թվականների վերջը աշխատել է դպրոցում՝ որպես տարրական դասարանների ուսուցչուհի։

1934 թվականին ամուսնացել է բանասաց Հայկ Խեմչյանի հետ և տեղափոխվել Ռազալու (այժմ՝ Դիտավան) գյուղը։ Ավանդույթներով հարուստ մի ընտանիքից նա տեղափոխվել է մի այլ ավանդույթներով հարուստ ընտանիք, որտեղ հարգի է եղել ժողովրդական բառն ու բանը, ուսումն ու գիտությունը։ Բանասաց Երանուհի Սիմոնյանն իր քեռուց՝ բանասաց Ալբեկ Առուստամյանից, մորից, կեսրարից, սկեսուրից և շրջապատի խոսք ու զրույց սիրող տարբեր մարդկանցից շատ բան է սովորել և կիրառել իր կյանքի ընթացքում։ Շատ հաճախ, երբ նա որևէ արտահայտություն կամ դարձվածք էր օգտագործում, անպայման հիշատակում էր սկզբնաղբյուրը, ինչպես օրինակ, «Հանգուցյալ Լուսանն ասում էր...», կամ «Իրիցանց Ակոփի սիրած խոսքն ա...», «Օղորմածիկ Իծուկի ասածներից ա...»։ Իծուկը՝ Այծեմնիկ Սահակյանը, ապրել է գյուղում 30-ական թվականներին, եղել է խոսքաշատ ու շատ համարձակ կին, տղամարդկանց հետ նստել է գյուղամիջում և քննարկել գյուղի անց ու դարձը։ Նա բազմաթիվ թևավոր ու հանպատրաստից հորինած չափածո խոսքերի հեղինակ էր։ Դրանց մի մասը Ե. Սիմոնյանը հիշում էր և օգտագործում։

Բանասացը շատ կոլորիտային անձնավորություն էր՝ ամբողջությամբ ներծծված ժողովրդական բառ ու բանով, լավ գիտեր ժողովրդական սովորույթներ, առած-ասացվածքներ, հավատալիքներ, երգեր, ժողովրդական բժշկություն, զրույցներ և այլն։ Նա բացատրում էր իր ասած առածների, դարձվածների, բառերի ու արտահայտությունների իմաստը։

Երբ ես սկսեցի իմ բանահավաքչական գործունեությունը, նա մոր իրավունքով մեծ ոգևորությամբ աջակցեց ինձ և մասնակցեց գրեթե իմ բոլոր գիտարշավներին։

Երբ սկսեցի հետաքրքրվել «հիշատակներով», պարզվեց, որ Ե. Սիմոնյանը իր երիտասարդության տարիներին կազմել է «հիշատակների» մի ձեռագիր հավաքածու, որն այժմ գտնվում է իմ արխիվում։ Ի տարբերություն 70-80-ական թվականների հիշատակների, Ե. Սիմոնյանի գրառածները իրենց բնույթով ավելի մոտ են ժողովրդական խաղիկնե-

րին, դրանք հիշեցնում են արևելյան քառյակները և չի բացառվում, որ աշուղական ծագում ունենան:

Երանուհի Սիմոնյանից բազմաթիվ տարաբնույթ նյութեր եմ գրառել՝ սկսած 1970 թվականից մինչև իր կյանքի վերջը:

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՐՏԻՆ ԿԱՐԱՊԵՏԻ

Բանասացի կենսագրությունը ներկայացվում է այնպես, ինչպես ինքն է պատմել.

«Ես՝ Մարտին Կարապետի Սիմոնյանս, ծնվել եմ 1887 թ. Քարվանսարա գյուղումը: Իմ պապերն էկել են Կոտայքի շրջանիցը, էկել են առաչ Քյավքառ Մոլլեն, ընդեղից անց են կըցել Թիֆլիզ, Էրևանսկի պլոշչադը՝ Թիֆլիզ կա, ընդեղ դագեք են շինել, ընդեղ ապրել են, մի տարի, էրկու տարի: Էն ժամանակ մարթ են ղարգել կեղի տեղ որոնելու, ման կյալով, ման կյալով կեղերը՝ եկել են, վերչը եկել են հասել են Քարվանսարա, էրկու կետի ղաթումը տեսել են քյարվանի ճիստ ա: Հա՛, ըտեղ էլ հավանել են և իմաց են արել, իրանց ժողովուրթն էլ կեղերումը ցրված են եղել, եկել են միացել են և գյուղը հիմնավորել: Իջևանի հիմնադիրները Սիմոնյաններն են, Աթոյաններն են,Հարությունյաններն են, Մկրտումյաններն են, շատերն են՝ եռեսուն ընտանիք են եկել: 1780 թվին են էկել, տրա համար դակումենտ ունենք մատենադարանումը, մեր կեղի կենսագրությունը: Հա՛, Տեր Կոմիտասի կիրքը»:

Բանասացը սովորել է մինչև 4-րդ դասարանը: Նա խոսքաշատ և կատակասեր մարդ է, սիրում է պատմել տարբեր զվարճալի դեպքեր: Երբ Մարտին Կարպիչին հարցրի, թե ինչ մասնագիտություն ունի, նա պատասխանեց. «Առևտրական, հողագործ, բաղակյող»,- և ծիծաղեց:

Բանասաց Մարտին Սիմոնյանից բանահյուսական նյութեր են գրառվել 1973, 74, 75 թվականներին:

ՕՀԱՆՅԱՆ ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Ծնվել է 1899 թվականին Ղազախի գավառի Քրդևան (այժմ՝ Ենոքավան) գյուղում:

Բանասացի հետագա պատմություններից պարզվեց, որ նրան որդեգրել են: Հարազատ մայրը, որ նշանավոր հայդուկ Սևքարեցի Սաքոյի քույրն էր, ծննդաբերության ժամանակ մահանում է: «Ես իմ մոր մայեն էլ չեմ կերել, հա՛, իմ մոր մայեն էլ չեմ կերել: Ուրեմն բթարափ անեմ, իմ հորը ըրեխա չի ըլել, իմ հրոխպերն ասել ա.- Էս մոտիկ հըրևան Թալլումը մի կնիկ ա ազատվել, քյնանմ նրանից մայա կըպիրեմ, իմ ախպորն ըրեխա չի ըլըմ: Ասել են.- Բա ո՞վ կպահի: Ասել ա.- Իմ հերնըմերը կըպահեն՝ տատը-պապը կպահեն: Իմ տատը, իմ պապը պահել են»:

Արշակին ուղարկում են Վերին Աղդամ (այժմ՝ Գանձաքար) գյուղը խորթ մոր ծնողների մոտ, և այնտեղ նա սովորում է տարրական դպրոցում: 1937 թվականին նա սովորել է Ստեփանավանի գյուղատնտեսական տեխնիկումում, որտեղ Հայաստանի տարբեր շրջաններից եկած ուսանողներից լսել է բազմաթիվ հեքիաթներ, զրույցներ ու պատմություններ: Սանկությունից նա մեծ սեր է ունեցել ժողովրդական բանահյուսության նկատմամբ և իր լսածները գրի է առել, որ չմոռանա ու օգտագործի:

Արշակ Օհանյանը հիմնականում աշխատել է կոլտնտեսությունում, տարբեր պաշտոններ է վարել (կոլտնտեսության նախագահ, Գյուղխորհրդի նախագահ, կուսակցական կազմակերպության քարտուղար, բրիգադիր, ֆերմայի վարիչ և այլն):

Բանասացը շատ լավ հիշում էր գյուղի անցյալի հետ կապված պատմությունները, անձրևառաջացման և անձրևախափան ծեսերը, եկեղեցական և ժողովրդական տոները և նրանց հետ կապված սովորույթները, ավանդություններ, տեղանուններ, հուշապատումներ, զրույցներ, զվարճախոսություններ, հանելուկներ, հեքիաթներ և այլն: Արշակ Օհանյանը ողջ կյանքն անց է կացրել հայրենի գյուղում, ունեցել է չորս տղա, երեք աղջիկ: Նյութերը ձայնագրվել են 1987 թվականին, ձայնագրությունները պահպանված են: